

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՎԱՅ 1899 ԹԱՎԱՆԻ

ՄՇԱԿ

(27-Ի ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՄՇԱԿԸ, ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂԱՌԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվա-
նի՝ 9 ռ., ինն և ութ ամսվան՝ 8 ռ., եօթ ամսվան՝ 7 ռ., վեց ամսվան՝ 6 ռ., հինգ ամսվան՝
5 ռ., չորս ամսվան՝ 4 ռ., երեք ամսվան՝ 3 ռ., երկու ամսվան՝ 2 ռ. և մի ամսվան՝ 1 ռուբլի:
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճա-
րեն տարեկան 6 ռուբլի. Ներքին պաշտօնները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժա-
նորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱՎԱՐԱՏԱՆԸ (Բաղադրայա և Բարձրագույն փողոցների անկիւն):

Կարողութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ»;
իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻՎԱԿՈՒԹԻՒՆ

Անընտարարի սկզբունք. — ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Նոր-Նախիջևանից. Նա-
մակ էջմիածնի դաւադուց. Ներքին լուրեր. —
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստա-
նից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀՆ-
ՈՒՍԳՐԱՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անմասն նկարիչը:

ԱՆՔՈՆԱԲԱՐԵԼԻ ՍԿՋԻՐՈՒՔ

Այժմ, երբ արդէն կատարվեց Ֆրանսի-
ական հանրապետութեան նախկին նա-
խագահ Ֆելիքս Ծորի թաղումը և կատար-
վեց կրօնական արարողութեամբ՝ Ֆրանսի-
ական մամուլը և զինուորական «Temps»
լրագիրը սկսել են զբաղվել խղճի ազա-
տութեան հարցով և ցաւ են յայտնում,
որ խղճի ազատութեան սկզբունքը այն-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՆՄԱՆ ՆԿԱՐԻՉԸ

(Լէօն Դօգլէ)

(Պատմաբան)

Ութ օր էր, որ դժբախտ Հարկմ քաղաքը
մատնված էր թալանի: Այդպէս վարձատրում
էին զինուորներին՝ օրանց եռանդի և յոգնածու-
թեան համար: Պաշարման մի վայրկեանին կա-
րել էր ենթադրել, որ ահա արքայական զօր-
քերը պիտի յետ նահանջեն, այնչափ յամառ,
այնչափ հերոսական էին պաշարվածները:

Քաղաքային պաշտումը իշխանել էր մեծ զօ-
րակաւոր, Ալբրայի հռչակաւոր դուքսը, արեւա-
ներից և զինուորներից բաղկացած իր շտաբով:
Այդտեղ էին գալիս զինուորական տեղեկագիրը,
լրտեսների տեղեկութիւնները, սուրհանդակները,
պաշարեղէնի սայլերը, ռազմավարները, զգեստե-
ղէն, որը թափում, դարձում էին բարձր սե-
նականերում: Պաշտի ամենամեծ դահլիճն էր
նորին վսեմութեան բնակարանը: Դուքսը ընում
էր այդտեղ մի փառահեղ անկողնում. պարզ և
բերրի բնակարանի տէր լինելով՝ նա ափսո-
սում էր այդ անկողնի շուրջը: Դուքսը աշխա-
տում էր այդ նոյն սենեակում լուսածափից մին-
չև դիշեր, ուստապառ անելով իր ութ քարտու-
ղարներին, որոնք պարտաւոր էին գրի առնել նրա

քան չէ յարգված Ֆրանսիայում՝ ինչպէս
պէտք է յարգված լինէր մի ազատ, հան-
րապետական երկրում:

Ֆելիքս Ծոր մահվան անկողնում ցան-
կութիւն էր յայտնել ընդունելու կրօնա-
կան վերջին միջնորդութիւնը. ուրեմն նա
խնդրել էր կրօնի, եկեղեցու օգնութիւնը՝
Համաձայն նրա այդ վերջին կամքին՝ նրա
ընտանիքը ոչ միայն հրաւիրել էր եկեղե-
ցու պաշտօնականներին վերջին հոգեւոր միջ-
նորդութիւնը մատակարարելու մեռնողին,
այլ և որոշել էր նրա թաղումը կատարել
կաթոլիկ եկեղեցու ծէսերով և արարողու-
թիւններով: Սակայն սօցիալիստները հար-
կաւոր համարեցին բողոքել պարլամեն-
տում ընտանիքի այս կարգադրութեան
դէմ և պահանջել, որ հանրապետութեան
հանգուցեալ նախագահի յուղարկւողութե-
ւիւնը և թաղումը կատարվի պարզապէս

կարճ և կտրուկ խօսքով. նրա արամադրութիւնը
որոշվում էր նրա քայլուածքով. — Թեւաղրկիս
խաղաղ, իր թաղանքի, իր թաղանքի սե
հագին, ձգված, լուր: Ոչ մի ծախս, ոչ մի բա-
րենհատութիւն երբէք չէր փայլի նրա երկար,
ծիթաղէն դէմքի վրա, որ վերջանում էր բարձր,
կամարանիւն ճակատով՝ ծածկված երեք կնի-
ւով՝ մակառանգական բռնութիւն, անվե-
հերութիւն և ընէն. ծնունդը կըր, որպէս մի
գունդ, մի քանի կոշտ մազեր միայն այստեղ-
այնտեղ ցցված:

Նա, ազնիւ իշխանը, ճաշում էր այդ նոյն
դահլիճում, նստած իր մատաւանագետ Դոմ-Ուրի-
գի և սենեկապետ Լաւ-Գարդասի մէջ տեղը.
դիմացը երեք երկուստար օֆիցէրներ, որոնք
թէև արքայի սիրելիներն էին, բայց դուքսը նը-
բանց շատ էլ չէր յարգում. պատճառը նրանց
զուարթ բնակարաններն էր, նրանց, ինչպէս
ինքն էր ասում դէմքը ծածկելով՝ հեշտասի-
րութիւնը:

Տիրոջ իստում յոտնկայս, ձեռքը սրի վրա դը-
րած, հոկում էր անդապ պահպան Քրիստոֆա-
րը, աղա՛, անյապ, ատված լրտեսը, որը ձեռքե-
րի մէջ էին քաղաքացիները դողդողալով դա-
տարկում իրանց ըսական ու արկղիկները:

Դուքսը, օգտվելով ճաշի կարճ ընդմիջումնե-
րից՝ հարցնում էր նրանց, այն ժամառ և կար-
մաղէմ հոլանդացիներին, որոնց ճարպը, սա-
տանայի ձեռքով շաղկապած ճարպը, գալարվելով
այնպէս հալվում էր տանջանքների կրակի վրա:
Ո՛րչափ տարբեր էին նրանք իրանից, դուքսից,

քաղաքացիական ձեռք, առանց կրօնական
արարողութեան, քանի որ թաղումը կա-
տարվում է պետութեան հաշուով: Վիճաբա-
նութիւնների ժամանակ յայտնվեց, որ
հանգուցեալի վերջին և հանդիսաւորա-
պէս արտայայտած ցանկութիւնը եղել է
ստանալ կրօնական վերջին միջնորդու-
թիւնները, որ եկեղեցական արարողու-
թիւնները միանգամայն համապատասխան
են հանգուցեալի կրօնական համազում-
ներին. այդ հիման վրա պարլամենտը
մերժեց սօցիալիստների պահանջը այն
հիմունքով և արդարապէս պատճառաբանու-
թեամբ, թէ որքան մի թաղումը ազգայ-
նի լինի, բայց ամեն մի օրինաւոր երկրի
համար պարտադիր և նուիրական պէտք է
լինեն մեռնողի կամքը, անձնական կրօնա-
կան համոզումները և նրա ընտանիքի
սուգը, պարտադիր պէտք է լինի խղճի
ազատութեան՝ սկզբունքի յարգելը: Այդ
նկատմամբ, Ֆրանսիայի և Ներքին
գրեթէ ամբողջ հասարակական կարծիքը
և լուրջ մամուլը պախարակում են սօցիա-
լիստների պահանջը, որովհետեւ այդ պա-
հանջը բռնաբարում է խղճի, դաւանու-
թեան ազատութիւնը: Ֆրանսիայի սոցիալի-
ստները, ինչպէս նաև կրօնական, թէ քաղաքական,
պախարակելի է. ոչ ոք իրաւունք չունի
ազատամտութեան, քաղաքականութեան,
քաղաքացիութեան անունով բռնաւոր
անհատի կրօնական համոզումներին, խղճի-
մանքի վրա: Խղճի ազատութիւնը այն
սրբալիցն է, ուր ոչ ոք իրաւունք չունի
մօտենալ. նա անբռնաբարելի է և անբռ-
նաբարելի պէտք է մնայ, եթէ միայն մենք
յարգում ենք իսկական քաղաքացիութե-
ւիւնը և լուսաւորութիւնը:

Եթէ դատաւարութիւն և պախարակելի
է այն կղերի վարմունքը, որը բռնի կերպով
կամենում է իր համոզումները թելադրել
նրան, ով չէ դաւանում կրօնական համո-
զումներ. եթէ մենք դիմելով ենք, երբ
կղերը, հակառակ մեռնողի ցանկութեան
և կամքին, կամենում է այժմ կրօնասէր
դարձնել նրան՝ ո՛րչափ առաւել դատա-
ւարտելի է, երբ մէկը, յանուն պետու-
թեան, պետական շահերի, ցոյց է տալիս
աններողամտութեան և Ֆրանսիական
թեան եռանդը և կամենում է դարձնել
մեռնողի դիակը անկրօնութեան ցոյցի

լեզուով, կանգնուածքով, դէմքերի հեղ արտա-
յայտութեամբ: Նրա նիհար մարմնիւր տալիս էր
խաղաղ, հանդիսաւոր ժամառ, միջնորդ իր լէյտե-
նանտները ուտելովէներով լցնում էին իրանց
փորերը: Դուքսը իր ճամբորդական կապոցների
մէջ ունէր մի քանի տօնի ձիւթներ, որից ամեն
օր նրան տալիս էին մի աման: Չերեկ, չերեկ
փչելով և ուտելով՝ նա լսում էր քաղաքացիներ-
ի ծանր, տաղալիւլ տրտուհիները. կոմէյլիան
մօնօտօն էր: Քաղաքացիներին գնահատում էին
ըստ իրանց հարստութիւնների. եթէ նրանք յա-
մառութեամբ շարունակում էին ստեղձ դահլիճը
հեռու չէր. սա իր օգնականների հետ միասին
ճաշում էր հարկան սենեակում ձիւթ նոյն ժա-
մանը: Դուքսը և դուքսը: Դա մի յաղթանակ,
կայտաւոր կտրիճ էր, սարաբաղայն, էլ Տօրտեղի
անունով:

Ել Տօրտեղի սաստիկ հայոյնում էր՝ երբ նո-
րին վսեմութեան բարի ցանկութիւնը ընդհա-
տում էր նրան մի հարցի համար, որը պիտի
առաջարկվէր այն խղիւղից մէկին: Տնտես-
ութեամբ, բերանը լեցուն՝ նա բարձրանում էր
սեղանի վրայից, գնում, վերջում էր անկիւնից
մի ահագին ժանտաւան (լեզի) կամ մի զոյգ
կարմրաքաղաք անկիւնից, ինչպէս ինքն էր անուա-
նում իր սիրուն ի կնիւնը. սրանք միշտ դը-
րած էին վառած մաղալի վրա՝ պատրաստ փոր-
ձի համար, թէև սակաւ էր պատահում, որ քա-
ղաքացիները երկար ընդդիմանային: Հազիւ ի-
րանք պատրաստութիւնները տեսնում էին, նա
առաջարկեցինք որոշալով աղաչում էին տա-

առաւել, հակառակ նրա և նրա ընտա-
նիքի բացարձակ կամքին:

Այդ նկատմամբ, չէ կարելի չը հա-
մակրել «Temps» լրագրին՝ երբ նա գրում
է. «Կան այնպիսի քաղաքացիներ և զգա-
ցուններ, որոնք պէտք է մեզ համար ընդ-
հանուր լինէին և միայն իրեն և մի նուիր-
ական ժառանգութիւն ամեն մի քաղա-
քացու համար: Այդ զգացումների մէջ
առաջնակարգ տեղ պէտք է բռնեն հայ-
րենիքի սէրը, մեռելների յարգանքը և
խղճի ազատութիւնը: Հասարակաց կարծի-
քը կը դատաւարտէ նրանց, որոնք երէկ,
պարլամենտում, ներշնչեցին աւելի ա-
զանդային ֆանատիկութեամբ, քան մեր
քաղաքացիութեան սկզբունքներով, և
ծանրապէս մեղանշեցին հանրապետու-
թեան դէմ»:

ՆԵՐՖԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՍՈՒԼ

Մարդու պատմութեան մէջ երկու զինուոր
չըլաններ են եղել — կենդանական կամ, աւելի
ճիշդ ասած, գազանային, և բարբարոսական:
Անցել են այդ չըլանները, այժմեան մարդու-
թիւնը, նոյն իսկ նրա ամենալուսաւոր ժամը —
Ներքին, որ չըլանին են պատկանում Ռուս
նշանաւոր նկարիչ Վերեյչապին «НОВОСТИ» լրա-
գրում պատմականում է այս հարցին, ասելով
որ ընդհանուր մարդկութիւնը այժմ էլ բարբա-
րոսական չըլանի մէջ է գտնվում: Ապացոյց —
պատերազմները: Պազանային կեցութեան չըլա-
նում մարդը սպանում էր իր նմանին՝ նրա միւր
ուտելու համար: Ժամանակները առաջացան,
զէնքի կատարելագործութիւնը հնարաւորութիւն
էր տալիս մարդուն սպանել ուրիշ կենդանիներ-
ին և նրանց ուտել: Մարդկութեան ճեղք-
հատէ դառնում էր մի բան, որ այնքան էլ ան-
հրաժեշտ չէ, և բացի դրանից մարդը ձեռք բե-
րեց մի հոգեկան մեծ արժանաւորութիւն — ա-
մօթ: Այնուհետև հասաւ բարբարոսութեան չըլ-
անը: Մարդու մի ուտելու ամօթ էր, սակայն
պատերազմը չը վերացաւ. կարելի էր դարձաւ
սպանել մարդուն, բայց այս անգամ ոչ թէ նրա
միւր ուտելու համար, այլ նրա ստացուածքները
կողոպտելու համար: Պատերազմի այդ հիմա-
կան գաղափարը մնում է մինչև այժմ, նշանա-
կում է, որ այժմ էլ մարդկութիւնը չէ հեռացել
բարբարոսական չըլանից:

Նեղ իրանց դուքսի մօտ և այդտեղ ճակատից յայ-
տնում էին իրանց թաղուածներին, իրանց գանձի
և իրանց մտերմների տեղը:

Դուքսը սարսափելի տրամադրութեան մէջ էր
այն երեկոյ. վատ լուրեր էր ստացել Գերմա-
նիայից, ուր հերետիկոսները շարժվում էին,
ճիշտ այդ ժամին եկել էր և մի երկրորդ նամակ
Սպանիայից. վեհապետը, չը նայած տարածու-
թեան՝ ցանկանում էր ուղղութիւն տալ պատե-
րազմական և այլ գործողութիւններին, նա կը-
տարվում էր դուքսին՝ նրա չափ ազաւնց
դաւն դաւալութեան համար:

Ճիշտ նախընթաց երեկոյին դուքսը, բարեբը-
տութեան մի վայրկեանում, միւս օրվայ ճաշին
էր հրաւիրել զօրքի ալիտայի նկարիչ Պէկլին —
մի բարի տաղանդաւոր տղայ, դուարթ և յան-
դուգն, նա արձանագրում էր կտաւի վրա աշ-
խարհակալների մեծ գործերը:

Պէկլին գալուստ պէս զգաց, որ միջնորդը
փոխարկալի էր: Դոմ-Ուրիգը աղօթքներ էր
փնթփնթում, Լաւ-Գարդասը երկուստար օֆի-
ցէրների հետ մի տաղտալի խօսակցութիւն էր
սկսել ամուր տեղերի և նրանց կործանման ար-
հեստի վերաբերմամբ. օֆիցէրները գաղտնաւոր
դիտում էին զօրապետի տխուր դէմքը, նրա
ձեռքերի ջղային շարժումները և նրա խիստ
նայուածքը:

Մեծ դուքսը բացվեցին: Ներս մտաւ մի կին,
որը ձեռքերից բռնել էին երկու վարդապետ:
Խաբանաշ, ուղիղ գծերով, աւելի ճկուն քան

Типографія Грузинск. Издат. Т—ва, Дорисъ-Мелик. ул. № 13.